

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Երևանի պետական համալսարան

ԱԿԱԳԵՄԻԱԿԱՆ ՎԵՊԻ ԺԱՆՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՄԵՐԻԿԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Հողվածը ներկայացնում է ակադեմիական վեպի արանձնահատկությունները ժամանակակից ամերիկյան և եվրոպական գրականության մեջ՝ հղում կատարելով վերջին քսան տարվա ընթացքում տպագրված աշխատանքներին: Աշխատանքում քննարկվում են ակադեմիական վեպի տարատեսակները և ժանրային առանձնահատկությունները: Ներկայացված են նաև հիմնական թեմատիկ առանձնահատկությունները, որոնք առկա են ամերիկյան և քրիտանական ճյուղերում՝ անդրադառնալով այնպիսի խնդիրների, ինչպիսիք են սեռային և ռասայական անհավասարությունն ու ներկայացվածությունը ակադեմիական վեպերում և մշակութային պատերազմները:

Բանալի բառեր. ամերիկյան գրականություն, քրիտանական գրականություն, ակադեմիական վեպ, համալսարանական վեպ, կամպոս, ակադեմիա, մշակութային պատերազմ, ճգնաժամային գրականություն, պոստմոդեռնիզմ

Ակադեմիական վեպի օրինակներ կարելի է գտնել՝ սկսած 1800-ական թվականներից, սակայն անհրաժեշտ է նշել, որ այդ աշխատանքները էապես տարբերվում էին նրանից ինչ այսօր համարվում է ակադեմիական վեպ: Այդ վեպերը հիմնականում ներառում էին որոշակի կրթական միջավայրի հետ առնչվող էլեմենտներ և չէին կենտրոնանում համալսարանական կյանքի նկարագրման վրա: Որոշակի զարգացում ապրելուց հետո այժմ ակադեմիական վեպը բնութագրվում է որպես սահմանային ժանր, որը ներառում է էլեմենտներ տարբեր գրական ժանրերից, ինչպիսին են, օրինակ դետեկտիվը կամ սատիրան: Ակադեմիական վեպ (Academic novel) գրական ժանրում գործողությունները մասամբ կամ ամբողջովին տեղի են ունենում համալսարանական միջավայրում: Այս ժանրին պատկանող ստեղծագործությունները հիմնականում նկարագրում են համալսարանական կյանքին բնորոշ գործողություններ. ստեղծագործության հերոսը՝ պրոտոգոնիստը, հաճախ դասախոս է կամ ուսանող, ով առերեսում է տարբեր բնույթի խնդիրներ: Ինչպես Վիրջինիայի համալսարանի պրոֆեսոր Ռալֆ Կոհենն է նկատել՝ յուրաքանչյուր թեորիա, որ նկարագրում է որոշակի ժանր, պետք է բացատրի ինչու և ինչպես է ձևավորվել ժանրը և տա տարբերակումների, փոխհարաբերությունների պատճառները /Cohen, 1985/: Փորձելով տալ ակադեմիական վեպի վերջնական սահմանում՝ գրականագետները հիմնականում կենտրոնանում էին այնպիսի առանձնահատկությունների վրա, ինչպիսիք են վեպի կառուցվածքը, որ պետք

է համապատասխաներ ակադեմիական օրացույցին, սյուժեն, որ նկարագրում էր անընդհատ պայքար ներգրավվելու կամ խուսափելու ակադեմիական միջավայրից, և սատիրիկ երանգ, որ հակված էր քննադատության:

Մինչ ակադեմիական վեպի օրինակների բուն քննարկմանը անդրադառնալը կարևոր է հասկանալ՝ ինչու է անհրաժեշտ ուսումնասիրել այս վեպերը և քննարկել հասարակության այն մոտեցումները կրթության նկատմամբ, որ արտահայտվում են ստեղծագործություններում: Պատճառներից առաջինը պարզ հետաքրքրությունն է, քանի որ կրթական ոլորտում որևէ կերպ ներգրավված անձը չի կարող չհետաքրքրվել նրանով թե ինչպես է դիտվում իր խումբը հասարակության այլ խմբերի կողմից: Մեկ այլ պատճառ է այն, որ այս վեպերի հեղինակները, հանդիսանալով մարդկային էության նկարագրողներ, շատ դիպուկ կարող են պատկերել տարբեր վերաբերմունքներ և բախումներ կրթական կոնտեքստում: Ուսումնասիրելով այս վեպերը կարելի է հեշտությամբ վեր հանել կրթական ոլորտում առկա թերությունները, ինչպես նաև հոգեբանական և սոցիալական խնդիրները:

Ակադեմիական վեպի օրինակներ հանդիպում են տարբեր ազգերի ստեղծագործություններում, սակայն առավել տարածված և հայտնի են եվրոպական, մասնավորապես բրիտանական և ամերիկյան մշակույթներում: Բրիտանական գրականության մեջ ակադեմիական վեպի օրինակներ կարելի է գտնել՝ սկսած 19-րդ դարի կեսից: Այստեղ հիմնականում օգտագործվում է «համալսարանական վեպ» (University novel) եզրույթը /Bosco, 2007/: Այնուամենայնիվ, «համալսարանական վեպ» տերմինը պետք է օգտագործել հետպատերազմյան գրականության վերաբերյալ, քանի որ համաշխարհային պատերազմից առաջ բրիտանական ակադեմիական գրականությունը կենտրոնացած էր բացառապես Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարանների շուրջ: Ավելին, մինչև 1955 թվականը տպագրված բրիտանական ակադեմիական վեպերի մեծ մասը նկարագրում է կյանքը Օքսֆորդում, իսկ մնացածը համըրյա ամբողջությամբ՝ Քեմբրիջում: Բնութագրելով բրիտանական ակադեմիական վեպը՝ գրաքննադատ Իան Կարտերը առանձնացրել է երկու բնութագրող հատկանիշ: Առաջինը հանդիսանում են Օքսֆորդն ու Քեմբրիջը՝ լինելով այն չափանիշը, որի հետ համեմատվում, մրցակցում և բնականաբար զիջում էին մյուս համալսարանները: Երկրորդ առանձնահատկությունն այն էր, որ համալսարանները Մեծ Բրիտանիայում դիտվում էին որպես մշակութային ցիտադելներ, որոնց անձեռնմխելիությանը սպառնում էին պրոլետարիատը, կանայք, գիտնականներն ու օտարերկրացիները: Ըստ Կարտերի՝ Օքսֆորդյան ակադեմիական վեպը սահմանափակ է, քանի որ անդրադառնում է միայն ազնվական համալսարաններին՝ անտեսելով այլ կրթական հաստատություններն ու հասարակության բաղկացուցիչ մասերը: 1945 թվականից հետո Բրիտանական ակադեմիական վեպի հետաքրքիր զարգացումներից մեկն այն էր, որ վեպը դուրս եկավ Օքսֆորդի (երկու համալսարանների խառնաբառը) միջավայրից և սկսեց անդրադառնալ նաև փոքր համալսարաններին և քոլեջներին /Bosco, 2007/: Սա բացատրվում է նրանով, որ հեղինակները այլևս միայն

Օքսբրիջի շրջանավարտներ չէին, հետևաբար գործողությունների վայրն էլ Օքսբրիջը չէր:

Նկարագրելով բրիտանական ակադեմիական վեպը՝ կարելի է առանձնացնել չորս բնութագրիչ հատկանիշներ: Սրանցից առաջինը կարելի է անվանել ըմբոստության կամ խուլիգանության վեպ: Այս աշխատանքները ներկայացնում են ուսանողների և նկարագրում նրանց՝ որպես արկածախնդիր և գումարը շռայլորեն վատնող երիտասարդների, ովքեր ըմբոստանում են համալսարանի ղեկավարության դեմ: Այս առանձնահատուկ ավանդույթը հատկապես լավ է բնութագրված Վիլիամ Տակերեյի «Պենդենիս» (“Pendennis”) վեպում, որտեղ նկարագրվում է Օքսբրիջյան կյանքը: Այս վեպերում քննարկվող որոշ թեմաներ իրենց դրսևորումն են գտել նաև քսաներորդ դարի վեպերում համալսարանական կատակների և խաբեությունների տեսքով: Հատկապես առանձնահատուկ հայտնիություն էին վայելում այն վեպերը, որտեղ նկարագրվում էր տղաների անբաժանելի ընկերությունն ու արկածները, և հանդուրժողական վերաբերմունք էր ցուցաբերվում նրանց արկածախնդիր կյանքի նկատմամբ:

Երկրորդ առանձնահատկությունը ակադեմիական կյանքի մասնավոր գործընթացների նկարագրումն էր: Հաճախ քննարկվող թեմաներից էին համալսարանական սիստեմի փոփոխությունները, դասավանդվող առարկաների, քննությունների և դեկանների նշանակման հետ կապված խառնաշփոթը: Քանի որ համալսարանական վեպը բնութագրվում էր նկարագրողական էր, շատ կոնկրետ էր արտացոլում այս բոլոր գործընթացները: Այն սկսում է անդրադառնալ այս իրավիճակներին հատուկ ռեալիստական ոճով: Վաղ աշխատանքներում քննությունները կամ կրթաթոշակների համար պայքարը էական դեր չեն ունեցել, քանի որ ուսանողները բարձր դասի ներկայացուցիչներ էին, ում կարիերայի հաջողությունները ոչ մի կերպ կախված չէին այս հանգամանքներից: Ընդունելության սիստեմի ռեֆորմը հանեցրեց նոր տիպի ուսանողների ի հայտ գալուն, ովքեր ավելի խելացի էին և դարձան ռեալիստական ակադեմիական վեպի հերոսներ: Այսպիսի աշխատանք է Թոմաս Հագսի «Թոմ Բրաունը Օքսֆորդում» (“Tom Brown at Oxford”) վեպը:

Հաջորդ առանձնահատկությունը կապված էր այն հանգամանքի հետ, որ կրթության մասնագետներն ու գիտնականները սկսեցին ակտիվ քննարկել և վերանայել համալսարանի դերը: Քննարկվում էր համալսարանական կրթության կարևորությունն ու օգտակարությունը, կամ ինչը պետք է լինի նման կրթության նպատակը: Ամենից կարևոր էր համարվում ճիշտ ընտրություն կատարել կրթության լիբերալ և գիտական մոտեցումների միջև: Այս բախումը իր արտացոլումը ունեցավ ժամանակի համալսարանական վեպերի մեջ:

Բրիտանական ակադեմիական վեպի վերջին առանձնահատկությունը պայամանավորված է նրանով, որ համալսարանական միջավայրը շատ հարմար է դետեկտիվ պատմությունների համար, քանի որ կասկածյալների խմբի գտնվելը նույն վայրում, ինչը պահանջվում է դետեկտիվ ժանրի համար, բավականին բնականոն է համալսարանական միջավայրում: Մա հնարա-

վորություն է տալիս հեղինակին ներկայացնել տարբեր ինտելեկտուալ և էքս-
ցենտրիկ կերպարներ, որոնցից յուրաքանչյուրն կարող էր գործել հանցանքը,
որը սովորաբար սպանություն էր: Մեկ այլ հանգամանք, որ մոտեցնում է ակա-
դեմիական վեպն ու դեռեկտիվը, այն է, որ հետախուզությունն ու գիտական
ուսումնասիրությունը ունեն շատ ընդհանուր հատկանիշներ, և հեղինակները
սա օգտագործում են վեպերի հավելյալ երանգավորումներ հաղորդելու հա-
մար: Այսպիսի ակադեմիական դեռեկտիվ վեպերի օրինակներ են Փիթեր
Դայմնդի «Լուսաբացը մեռածների հետ» («Down among the Dead Men»),
Քվենտին Պատրիկի «Սպանություն Քեմբրիջում» («Murder at Cambridge») և
Ջոն Մաստերմանի «Օքսֆորդյան ողբերգություն» («An Oxford Tragedy»)
վեպերը: Ակադեմիական դեռեկտիվ վեպերի նոր երանգահաղորդվեց, երբ
Դորոթի Սայերսը ներկայացրեց իր «Գաուդի գիշերը» («Gaudy Night») վեպը,
որի գործողությունները տեղի էին ունենում Օքսֆորդի կանանց քոլեջում: Այս
աշխատանքը հատկանշական է, քանի որ ակադեմիական վեպը իր զարգաց-
ման սկզբից շատ հազվադեպ էր անդրադարձել կանանց:

Ի տարբերություն բրիտանական ճյուղի՝ ակադեմիական վեպի զարգա-
ցումը ամերիկյան գրականության մեջ սկսվել է ավելի ուշ: Քսաներորդ դարի
սկզբում լինելով ոչ այնքան տարածված՝ առաջին ակադեմիական վեպերը
դեռահասական էին: Նրանք օգտագործում էին ակադեմիական միջավայրը
նկարագրելու համար հերոսի բազմաբնույթ անհոք արկածները: Փորձ չէր
կատարվում քննադատական վերլուծության ենթարկել միջավայրը, և որպես
արդյունք քննարկվող թեմաները սահմանափակվում էին այնպիսի հարցերով,
ինչպիսիք են, արդյոք հերոսը կհաղթի խաղը կամ կհանձնի քննությունը:
Որպես հակադրություն՝ վեպերի մեկ այլ խումբ պատկանում էր մյուս
ծայրահեղությանը և քննադատում էր նեղ ակադեմիական կյանքը: Այս
աշխատանքները անհաջող էին մասնավորապես այն պատճառով, որ ավելի
շատ նմանվում էին քննադատական հողվածների, քան գեղարվեստական
գրականության: Այսպիսով, հեղինակների հավաքական մոտեցումը ակադե-
միական կամ համալսարանական կյանքին կարելի էր բնութագրել որպես
բացասական: Այնուամենայնիվ, այս ընդհանուր բացասական վերաբեր-
մունքը երբեմն ստանում էր դրական երանգավորումներ, երբ հեղինակները
իրենց աշխատանքներում փորձում էին ներկայացնել քննադատության պատ-
ճառները: Ընդհանուր առմամբ այս աշխատանքները առաջ են քաշում
համալսարանական կյանքի մի քանի բացասական բնութագրիչ: Դրանք են՝
տնտեսական կամ պրագմատիկ ռեալիզմի պակասը, հուզականության և
զգայականության պակասը, արժեքների խառնաշփոթը, խոսքի ազատության
սահմանափակումը և կիսաչափահաս ուսանողների էության ըմբռնելու և
ընդունելու անկարողությունը:

Ակադեմիական վեպը զարթոնք է ապրում և ձեռք բերում ճանաչվածու-
թյուն քսաներորդ դարի կեսերից սկսած: Այս շրջանում գրված ստեղծագոր-
ծությունները հիմնականում բարձրագույն կրթության ընդլայնման և հասա-
նելիության արդյունք էին հետապատերազմյան շրջանում: Միևնույն ժամանակ

հեղինակները դեռևս պահպանում էին ակադեմիական աշխարհի պատկերը որպես առանձնացած միջավայր: Այս վեպերի գործողությունները մեծ մասամբ տեղի են ունենում փոքր համալսարաններում կամ քոլեջներում՝ անդրադառնալով ներակադեմիական խնդրումներին և հաճախ քննադատական մոտեցում ունեն ակադեմիական գործընթացների նկատմամբ: Այս աշխատանքները ամերիկացի գրաքննադատ Լեալի Ֆիդլերը անվանել է հակաակադեմիական վեպ /Fiedler, 2007/: Հավանաբար այս աշխատանքների մեկուսացած, առանձնացած բնույթով է բացատրվում այն հանգամանքը, որ այժմ նրանք թվում են ժամանակավրեպ, քանի որ նկարագրում են եզակի աշխարհ առանձին համալսարանում և ոչ ավելի լայն ամերիկյան մշակույթ:

Ակադեմիական վեպը վերջին տասնամյակում է՛լ ավելի մեծ տարածում է գտել ամերիկյան ժամանակակից գրականության մեջ ի տարբերություն այլ ազգերի գրականությունների: Հենց այս պատճառով էլ մենք կքննարկենք ժանրի առանձնահատուկ զարգացումները հղում անելով ժամանակակից ամերիկյան գրողներին: Ակադեմիական վեպի նման տարածումը բացատրվում է նրանով, որ համալսարանը այլևս անձանոթ և պարփակված աշխարհ չէ, այլ ծանոթ միջավայր: Դասախոսները և ուսանողները այստեղ դիտվում են որպես հասարակության միջին դասի անդամներ և այլևս չեն պատկանում միայն վերնախավին: Ամերիկյան մշակույթում ակադեմիական վեպը բնութարգվում է հիմնականում երկու անվանմամբ՝ «համալսարանական վեպ» (University novel) և «կամպուս վեպ» (Campus novel): Վերջինս չունի բառացի հայերեն թարգմանություն, բայց վերաբերում է համալսարանին կամ քոլեջին կից տարածքին, որտեղ ուսանողները անցկացնում են դասերից դուրս ժամանակը և հաճախ նաև ապրում են այնտեղ: Համալսարանական վեպի կենտրոնում դասախոսն է. աշխարհն ու իրադարձությունները մեկնաբանվում են նրա տեսանկյունից: Կամպուս վեպի հիմնական գործող անձինք ուսանողներն են, հետևաբար վեպում առկա հարցերը քննարկվում են ուսանողների դիտանկյունից /Carter, 1990/: Այս վեպերի ճնշող մեշամասնության գործողությունները տեղի են ունենում մասնավոր, էլիտար համալսարաններում:

Անդրադառնալով մասնավորապես համալսարանական վեպին անհրաժեշտ է նշել, որ այս վեպերում հիմնական գործող անձը հանդիսանում է դասախոսը: Համալսարանական վեպը (University novel) կարող է օգտագործվել հասկանալու համար թե ինչպես է որոշակի մասնագիտություն կամ գիտության ճյուղ ընկալվում: Այս տարատեսակի համար տիպիկ է նաև նկարագրել դասախոսի կերպարը և համալսարանական ադմինիստրատիվ հարաբերությունների խճճվածությունը: Հետաքրքիր է կին և տղամարդ դասախոսների նկատմամբ տարբեր վերաբերմունքների առկայությունը: Տղամարդ դասախոսները ամենից հաճախ նկարագրվում են որպես վերերկրային, պարզամիտ և հասարակ, երբ գործը հասնում է իրական կյանքի իրավիճակներին: Ամաչկոտ, նյարդային ու զսպված լինելը դասախոսների մեկ այլ տարածված նկարագրություն է, և սա ներկայացվում է որպես ինտելեկտուալ աշխատանքի և կյանքի անխուսափելի արդյունք: Հանդիպում են նաև այնպիսի նկարա-

գրություններ համաձայն որոնց դասախոսը ձախողակ է, ով չի կարողացել իրականացնել երազանքները և ստիպված է բավարարվել համալսարանական կյանքում իրեն տրամադրված սեփական կարևորության զգացումով: Ի տարբերություն տղամարդ դասախոսների՝ կանայք ինտելեկտուալ կյանքի արդյունքում դառնում են սառնասիրտ և կոպիտ: Որպես արդյունք՝ կորցնում են սեռային հատկանիշները՝ սահմանափակելով իրենց հասարակական դերը միայն դասախոս լինելով, ավելի են նվազեցնում այն հավանականությունը, որ երբևէ կամուսանան: Համալսարանական վեպերում կին դասախոսների ճակատագիրը փոխվում է, երբ նրանք գեղեցիկ և գրավիչ կերպարներ են: Գեղեցիկ կանայք համալսարանում ստիպված են լինում բազմիցս ապացուցել իրենց որակները և արժանիքները, քանի որ հասարակության կարծիքով այս կանայք հայտնվել են համալսարանական միջավայրում որոշակի հոգեբանական խնդրի պատճառով: Ի հակադրություն, տգեղ կանանց հետաքրքրվածությունը գիտությամբ միանգամայն արդարացված էր և ընդունելի հասարակության կողմից: Այնուամենայնիվ, դասախոսների ստերեոտիպիկ նկարագիրները բնորոշ էին ժամանակաշրջանին:

Վերադառնալով ակադեմիական վեպի ընդհանուր նկարագրին՝ կարելի է ասել, որ այս վեպերի դրսևորումները ամերիկյան գրականության մեջ առանձնանում են թեմաների յուրահատկությամբ: Ուղղվածություններից առաջինը վերաբերում է, այսպես կոչված, «մշակութային պատերազմին», որը 1990-ականներին համակել էր ամբողջ Ամերիկան: Մշակութային պատերազմը պահպանողական և լիբերալ արժեքների բախումն էր, որը իր ազդեցությունն էր ունեցել նաև կրթական համակարգի վրա: Այս բախումը իրենց վեպերում նկարագրել են մի շարք հեղինակներ, ինչպիսիք են Աննա Բարնայսը «Պրոֆեսոր Ռոմեո» (“Professor Romeo”), Ֆրանսին Պրոզը «Կապույտ հրեշտակ» (“Blue Angel”) և Ֆիլիպ Ռոթը «Մարդկային արատ» (“The Human Stain”) վեպերով: Համալսարանները, առավել քան որևէ այլ հաստատություն, համարվում էին մշակութային պատերազմի թատերաբեմ, և այսպիսով ակադեմիական վեպն էլ միջոց՝ մշակութային քաղաքականության պրոպագանդայի համար /Edgerton, 2005/: Այս վեպերը հիմնականում անձնավորում էին գաղափարների պայքարը, և սյուժեն էլ պտտվում էր սեռային կրոնական և ռասայական խտրականությունների շուրջը: Վեպերը նկարագրում էին ավանդական մշակութային արժեքների բախումը սեռային հիերարխիայի քննադատների հետ, ինչի շնորհիվ աշխատանքները ստացվում էին քննադատական, իսկ լիբերալ արժեքների տարածումը որակվում էր որպես բարոյական տեսանկյունից վիճելի: Մշակութային պատերազմի պատմությունները մեծ մասամբ գրվում էին հեղինակների հին սերնդի կողմից ովքեր արտահայտում էին իրենց անհանգստությունը արժեքների փոփոխության և արական սեռի արտոնությունների կորստի վերաբերյալ:

Ժամանակակից ամերիկյան ակադեմիական վեպի մեկ այլ և հավանաբար գերակշռող ուղղվածությունը անդրադառնում է միջին տարիքի դասախոսների ճգնաժամին, ովքեր վերագնահատում են սեփական աշխատանքն ու

կյանքը: Օրինակները ներառում են Մայքլ Չաբոնի «Հրաշալի տղաները» (“Wonder Boys”), Անն Բիթիի «Մեկ այլ դու» (“Another You”), Դենիս Ջոնսոնի «Աշխարհի անունը» (“Name of the World”) և Պոլ Օստինի «Պատրանքների գիրքը» (“Book of Illusions”) վեպերը: Հիմնականում անդրադառնալով միջին հասակի սպիտակամորթ տղամարդ դասախոսների խնդիրներին՝ այս վեպերը երբեմն անդրադառնում են նաև կին դասախոսներին, ինչպես, օրինակ Լորրի Մուրի «Անագրամներ» (“Anagrams”) վեպում: Միջին հասակի ճգնաժամային վեպերը հաճախ պատկերում են դժբախտ քառասունից հիսուն տարեկան դասախոսի, ով գտնվում է կարիերայի զարգացման մեջտեղում և բախվում է երիտասարդության կորստի, աշխատանքային հիասթափությունների, ամուսնական անհաջողությունների հետ /Ehrenreich, 1989/: Այս հանգամանքները էլ ավելի են խորացնում ճգնաժամը և հարստացնում պյուժեն: Վեպերը հիմնականում կատակերգական են և վերականգնողական՝ ի հակադրություն մշակութային պատերազմների պատմությունների, որոնք նախագգուշական էին և սովորաբար ունենում է դասախոսի համար վատ ավարտ: Դասախոսներ այս ուղղվածության մեջ ավելի քիչ են կապված համալսարանին (կամպուսին) քան նախորդ աշխատանքներում, ինչպիսին է, օրինակ, «Պատրանքների գիրքը» վեպը: Այս վեպերի մեկ այլ առանձնահատկությունը այն է, որ դասախոսի կերպարը փոխվել է, նա այլևս Եվրոպայում կրթված բարձր դասի ներկայացուցիչ չէ, այլ հասարակ մարդ, ով վարում է դժվար միջին դասի գոյություն: Այսպիսով, ակադեմիական վեպը միաձուլվում է գոյության պայքար մղող միջին դասի ներկայացուցիչների գրականության հետ /Showalter, 2005/:

Երրորդ ուղղությունը, որոշ առումով հանդիսանում է համայնապատկեր, որ միավորում է մի շարք կերպարներ չկենտրոնանալով հերոսի ճգնաժամի կամ մշակութային պատերազմի մեկոդրամային վրա: Այս ուղղության լավագույն աշխատանքներից է համարվում Ջեյն Սմայլիի «Մու» (“Moo”) մեպը, որը առանձնանում է՝ ներկայացնելով բազմապիսի կերպարներ՝ դասախոսներ, ուսանողներ, ադմինիստրատիվ աշխատողներ, ովքեր բնակվում և աշխատում են նույն համալսարանական տարածքում: Այս վեպերը շեղվում են սպիտակամորթ տղամարդ դասախոսների նեղ բնութագրումից, ներառելով հասարակության այլ անկյուններ և գործող անձինք, ինչն ավելի լավ է պատկերում ժամանակակից ամերիկյան մշակույթի բազմազանությունը: Անհրաժեշտ է նշել, որ սևամորթ դասախոսները կամ ուսանողները շատ հազվադեպ էին հայտնվում ակադեմիական վեպերում որպես հիմնական գործող կերպար: Սահակայն համաշխարհային պատերազմից հետո իրավիճակը փոխվեց: Առաջին սևամորթ դասախոսին հերոսի դերում կարելի է տեսնել Չեսթեր Հայմսի «Երրորդ սերունդը» (“The Third Generation”) վեպում, որտեղ պրոֆեսոր Թայլերի ակադեմիական կարիերան տուժում է իր ռասսայական պատկանելիության պատճառով: Նրան ստիպում են ընտանիքի հետ տեղափոխվել հյուսիս, որտեղ նրանց սպասում էին նվաստացուցիչ պայմաններ: Լինելով մվիրված իր աշխատանքին և իր նմանների իրավիճակի բարելավմանը

պրոֆեսոր Թայլերը ամենառեալիստական սևամորթ կերպարներից է, միևնույն ժամանակ լինելով բավական տրագիկ կերպար, ով սպանվում է մի սևամորթ անձանոթուհու պատիվը պաշտպանելիս: Այսպիսով, հասարակության տարբեր շերտեր և փոքրամասնություններ ևս ներառվում են ակադեմիական վեպի գունապնակի մեջ: Երկու այլ աշխատանքներ, որ ներկայացնում են կերպարների անսամբլ, հանդիսանում են Տ. Ք. Բոյլի «Ներքին շրջանակ» (“The Inner Circle”) և Ջադի Սմիթի «Գեղեցիկի մասին» (“On Beauty”) վեպերը: «Ներքին շրջանակ» վեպում հեղինակը փորձում է վերարտադրել դարաշրջանի կերպարը և կարծիքները ակադեմիկների խմբի միջոցով: «Գեղեցիկի մասին» վեպը անդրադառնում է խառը ընտանիքում պոստմոդեռնիստական բարդություններին:

Այսպիսով, չորրորդ ուղղությունը ներառում է պոստմոդեռնիստական զարգացումներ՝ հաճախ քննարկելով տեխնոլոգիաների ազդեցությունը ժամանակակից մարդու կյանքի վրա: Այս վեպերը հակված են ներկայացնելու ավելի սպեկուլատիվ, քան ռեալիստական սյուժեներ: «Սպիտակ աղմուկ» (“White Noise”) վեպը այս ուղղվածության առաջին աշխատանքներից է և քննարկում է մեդիայի ներառվածությունը մեր կյանքում հեռուստատեսության, ռադիոյի և գովազդային հոլովակների միջոցով: Այս ուղղության ներկայացուցիչներ են նաև Ռիչարդ Պատերսը «Գալատեա 2.2» (“Galatea 2.2”), Ջոնաթան Լեթենը «Երբ նա մազլեց սեղանի վրայով» (“As She Climbed Across the Table”) և Նիլ Սթիվենսենը «Անաթեմ» (“Anathem”): Աշխատանքների վրա մեծ ազդեցություն են թողել ժամանակակից տեխնոլոգիայի առաջացրած փոփոխությունները, ինֆորմացիայի տարածումն ու գիտակցության մոդելները, ինչը տիպիկ է պոստմոդեռնիստական դարաշրջանի համար: Այս ուղղությունը երբեմն նույնացվում է գիտական ֆանտաստիկայի ժանրի հետ, օրինակ Վիլիամ Գիբսոնի ազդեցիկ «Նյուռոմանսեր» (“Neuromancer”) վեպը, որը ուսումնասիրում է թե ինչպես է տեխնոլոգիան ազդում մեր գոյության վրա և փոխակերպում գիտակցության մոդելը: Կարևոր աշխատանքներից մեկ այլը, «Գալատեա 2.2» պատմում է մի գրողի պատմություն, ով փորձում է ստեղծել համակարգչային ծրագիր, որը կկարողանա հաջողությամբ հանձնել գրականության քննությունը համալսարանում: Սա ընդգծված գաղափարական վեպ է, որ ուսումնասիրում է մտավոր կարողությունները, իմացական գործընթացներն ու այն, թե ինչն է մարդուն դարձնում մարդ:

Հինգերորդ ուղղությունը միայն վերջերս է հայտնվել ժամանակակից ամերիկյան ակադեմիական վեպի թատերաբեմում և քննարկում է հակամասնագիտականացումը: Ուղղվածության օրինակներից են Ջեյմս Հայնսի «Անսահման տիեզերքի թագավորներ» (“Kings of Infinite Space”), «Հաջորդը» (“Next”), Սեմ Լիփսիթի «Խնդրանք» (“The Ask”) վեպերը /Kramer, 2004/: Այս ճյուղը զարգացել է միջին տարիքի ճգնաժամային գրականությունից, բայց դասախոսը այլևս կենտրոնական դերում չէ: Հիմնական կերպարները առընթեր դասախոսներ են կամ զբաղեցնում են ծառայողական պաշտոն համալսարանում /Williams, 2007/: Նրանք լիիրավ դասախոսներ չեն, ունեն

ակադեմիական պատրաստվածություն, սակայն չունեն պատշաճ աստիճան ակադեմիական աշխարհում: Այս ուղղվածության որոշ աշխատանքների կերպարներ, որոնք գտնվում են աշխատանքային ճգնաժամի սկզբում: Պատմությունները վերարտադրում են ոչ թե դասախոսների պահանջվածության նվազումը, այլ դասավանդող ուժի շերտավորումները, ավելի քիչ մասնագիտացած դասախոսներով և ավելի շատ առընթերներով և ժամանակավոր փոխարինողներով /Showlater, 2005/: Սա ենթադրում է, որ դասախոսական կազմը այլևս համալսարանի սիրտը չէ, ինչպես եղել սկսած միջին դարերից: Այժմ կենտրոնը ադմինիստրացիան է, իսկ դասախոսները՝ ծառայություն մատուցող, ում վարձում են որոշակի ժամանակով: Ի պատասխան իրերի այսպիսի դասավորությանը՝ ժամանակակից ակադեմիական վեպը առաջարկում է ոչ թե վերականգնողական լուծումներ, ինչպես միջին տարիքի ճգնաժամային վեպում, այլ սև հումոր՝ ոգեշնչված դժբախտությունից և ճախողումից:

Աշխատանքի այս հատվածում մեր նպատակն է քննարկել ակադեմիական վեպի այն առանձնահատկությունները և թեմաները, որոնք բնորոշ են վեպերի ավելի լայն շերտերի համար և սահմանափակված չեն որոշակի ազգային գրականություններով: Այդպիսի թեմաներից առաջինը ակադեմիական անկախության և զբաղվածության քննարկումն է: Ռոբերտ Հերիքսի “Chimes” վեպը առաջինն է, որ քննարկել է ակադեմիական անկախության թեման, անդրադառնալով մի դասախոսի պատմության ով խնդիրներ է ձեռք բերում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իր պացեֆիստական հայացքների պատճառով: Նույն կերպով Բեռնարդ Դե Վտտոյի “We Accept with Pleasure” վեպի հերոսը զրկվում է աշխատանքից իր քաղաքական հայացքների պատճառով: 1950-ականների ամենաազդեցիկ վեպերից երկուսի համար ակադեմիական անկախությունը հիմնական շարժիչ ուժ է: Մերի Սկզարտին իր “The Groves of Academy” վեպում օգտագործում է զավեշտախաղ և հեգնանք որպիսի ընդգծի փոխկապակցվածությունը ակադեմիական անկախության բացակայության և այդ միջավայրի արատավորման միջև: Գրքի հակահերոսը, Հենրի Մալքահին անգլերենի դասախոս է պրոգրեսիվ լիբերալ արվեստների քոլեջում, ով բացահայտում է, որ իր պայմանագիրը չի վերակնքվելու: Չնայած համալսարանի նախագահը լիբերալ հայացքների տեր էր, Մալքահին ենթադրում է, որ ինքը չի վերանշանակվի իր կոմունիստական հակումների պատճառով: Նրա հորդորներով դասախոսական կազմը սկսում է աջակցություն ցուցաբերել և արդյունքում Մալքահին վերանշանակվում է: Ամբողջ խնդիրը նրանում է, որ Մալքահին երբևէ կոմունիստ չի եղել և հորինել էր այդ պատմությունը վերանշանակվելու նպատակով:

Մեկ այլ թեմա, որ բնորոշ է ակադեմիական վեպին՝ անկախ ազգային գրականության պատկանելիությունից, համալսարանների կամ կրթական հաստատությունների ղեկավարների նկարագրումն է: Այս կերպարները առկա են ակադեմիական վեպերի համարյա բոլոր օրինակներում, սակայն սահմանափակված են երկրորդական կարևորությամբ: Հատկանշական է

այն փաստը, որ նույնիսկ, երբ համալսարանների ղեկավարները հայտնվում են հիմնական գործող անձի դերում, նրանց ամբողջական անունը հազվադեպ է նշվում՝ սահմանափակվելով միայն ազգանվամբ: Փառամոլությունը այս կերպարների ամենից տարածված հատկանիշն է, որ առկա է ակադեմիական վեպում: Ղեկավարները հիմնականում հանդես են գալիս որպես չափազանց ինքնավստահ կերպարներ, ովքեր առիթը բաց չեն թողնում հպարտանալ սեփական ազդեցիկությամբ և պաշտոնով: Որպես հետևանք՝ նրանք առանձնացած են դասախոսական կազմից և ուսանողներից: Երբեմն ղեկավարների փառասիրությունը արտահայտվում է նաև ծայրահեղ բարյացակամությամբ: Այդպիսի կերպար է Դուեյթ Ռոբինսը, Բենտոն համալսարանի նախագահը, Ռենդել Ջարելի «Նկարներ համալսարանից» (“Pictures from an Institution”) վեպից: Այս կերպարների փառասիրությունը համարյա միշտ զուգակցվում է անձնական նկրտումներով: Ղեկավարները ակադեմիական վեպում հազվադեպ են բավարարված լինում սեփական ձեռքբերումներով և պաշտոնով: Ոմանք երազում են լինել ավելի մեծ և ավելի ճանաչված համալսարանների ղեկավար, ոմանք էլ հետամուտ են լինում քաղաքական պաշտոնների:

Այս կերպարների մեկ այլ առանձնահատկություն է ինքնավստահությունն ու դժվար իրավիճակների կառավարումը: Քանի որ այս կերպարները ներքուստ ենթադրում են ոչ սովորական վստահություն, կարելի է ենթադրել, որ ակադեմիական վեպում հանդիպող ցանկացած համալսարանի ղեկավար ունակ է լինելու հարթել ճգնաժամային իրավիճակները: Հիմնականում երկու տիպի ճգնաժամային իրավիճակներ են հանդիպում ակադեմիական գրականության մեջ՝ ակադեմիական ազատության սահմանափակում և ուսանողների խռովություն: Ղեկավարներին հիմնականում հաջողվում է առաջին խնդրի լուծումը, բայց համարյա երբեք հաջողությամբ չեն ավարտվում ուսանողական ընթացությունը վերջնականապես ճնշելու փորձերը: Ակադեմիական ազատության համատեքստում ղեկավարները կարող են դասակարգվել երկու խմբի: Առաջին խումբը աջակցում է ազատությունն ու գաղափարների բաց քննարկումը համալսարանի տարածքում, իսկ երկրորդ խումբը ընդդիմանում է նորարարական գաղափարների համալսարան ներմուծմանը: Վերջինս ակադեմիական վեպում ամենահաճախ հանդիպող տարբերակն է, և սա հենց այն խումբն է, ում ամենալավն է հաջողվում պահպանել համալսարանական հավասարակշռությունը: Օրինակ՝ Բերնարդ Մալամուդի «Նոր կյանք» (“A New Life”) վեպում, համալսարանի ղեկավարը ընդհանուր ժողովի ժամանակ մեղադրում է դասախոսներից մեկին կոմունիստական հայացքների համար և հայտարարում, որ նրա մեկամյա պայմանագիրը չի վերակնքվի: Այս ժողովից հետո, համալսարանում բոլոր գաղափարական անհամաձայնությունները ասես հրաշքով վերանում են:

Այսպիսով, «ակադեմիական վեպ» տերմինը հանդիսանում է լայն բնութագրիչ, որը ներառում է մի քանի ենթատիպեր կամ ենթաժանրեր, որոնք դիտարկում են համալսարանական կամ ակադեմիական երևույթները տար-

բեր դիտակետերից: Այս վեպերը ամենից հաճախ հանդիպում են բրիտանական և ամերիկյան գրականություններում և զարթոնք են ապրել հատկապես վերջին տասնամյակներում: Բրիտանական ակադեմիական վեպը առանձնահատուկ է Օքսբրիջի, դետեկտիվ էլեմենտների և կրթական համակարգի վերափոխումների առկայությամբ: Այնուամենայնիվ, բրիտանական ակադեմիական վեպը զիջում է ճանաչվածությամբ ամերիկյա ճյուղին, որը այժմ ծաղկում է ապրում: Ամերիկյան ակադեմիական վեպը առանձնանում է մշակութային պատերազմների, պոստմոդեռնիստական լուծումների և հասարակության լայն շերտերի ներգրավմամբ:

Ակադեմիական վեպի զարգացումն ու փոփոխությունները արտացոլում են ժամանակի վերաբերմունքը ուսումնական հաստատությունների, դասախոսների և ուսումնական պրոցեսում ներգրավված բոլոր կողմերի հանդեպ: Հեղինակները իրավամբ ներկայացնում են կարծիքներ որոնք տարածված են հասարակության տարբեր ներկայացուցիչների շրջանում: Այս վերաբերմունքները թաքնված են կերպարների գործողություններում և երբեմն բացահայտորեն չեն ներկայացվում: Այնուամենայնիվ, որոշ վեպերում դրանք բացահայտ են, հատկապես կին դասախոսների պարագայում: Կրթված կինը ծաղրանքի և անվստահության առարկա էր դարձել և հետևաբար ակադեմիական վեպերն էլ հակված էին ներկայացնել այս կանանց ստերեոտիպիկ կերպարներ: Այս մոտեցումը պահպանվել է մինչև մշակութային պատերազմի ի հայտ գալը: Հաշվի առնելով այս հանգամանքը, կարելի է ասել, որ ժամանակակից ակադեմիական վեպը թույլ է տալիս ուսումնասիրել տարբեր խնդիրներ, որոնք առկա են կրթական համակարգում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bosco M., Kimberly R. C. (eds.) *Academic Novels as Satire: Critical Studies of an Emerging Genre*. Ceredigion, UK: Edwin Mellen Press, 2007.
2. Carter I. *Ancient Cultures of Conceit: British University Fiction in the Post War Years*. London and New York: Routledge, 1990.
3. Cohen R. *Afterwards: The Problem of Generic Transformations*. Hanover: University Press of New England, 1985.
4. Edgerton S. et al (eds.) *Imagining the Academy: Higher Education and Popular Culture*. New York: Routledge, 2005.
5. Ehrenreich B. *The Fear of Falling: The Inner Life of the Middle Class*. New York: Pantheon, 1989.
6. Fiedler L. *The War against the Academy // The Academic Novel: New and Classic Essays*. Merritt Moseley (ed.) Chester: Chester Academic Press, 2007.
7. Kramer J. E. *The American College Novel: An Annotated Bibliography*, 2nd ed. Lanham: Scarecrow, 2004.

8. Showalter E. *Faculty Towers: The Academic Novel and Its Discontents*. Philadelphia: University of Pennsylvania Press, 2005.
9. Williams J.J. The Rise of the Academic Novel // *American Literary History*, vol. 24, no. 3, 2007.

А. БАБАДЖАНИЯН – Академический роман в современной американской и европейской литературе. – В данной статье представлены основные особенности академической прозы в современной американской и британской литературе. Подтипы и поджанры академической прозы представлены вместе с основными направлениями и тематическими особенностями. Рассмотрены такие вопросы, как гендерное и расовое равноправие в академической прозе и культурная война.

Ключевые слова: академический роман, университетский роман, кампус, академия, культурная война, кризисная литература, постмодернизм

A. BABAJANYAN – Academic Novel in Modern American and European Literature. – The present paper discusses the typical features of academic novel in modern American and European, specifically British literatures referring to the works published in the last two decades. Subtypes and subgenres of academic novel are discussed together with specific thematic features of American and British academic novels. Issues such as gender and racial discrimination in academic novels and cultural wars are also under consideration.

Key words: academic novel, university novel, campus, academia, culture wars, crisis literature, postmodernism